Հարութիւնը
Տիրամայր Սուրբ
Տարեմուտ օրհնութեան
ուսումնական բացվէները

372
Հ-45

ԱԲՐԱՀԱՄԱԳԱՌ

ՏԻՐԱՄԱՅՐ

ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԻՏԻ

ՕՐԻՈՐԴԱՑ ՍԻՍՈՒՄՆԵՐԸՆԻ

ԲԱՑՈՒԻՆԸ

1864

ՀԱՌՔԻ

ԳԵՐԵԼԵԳԻՆ

2
45

ՏԻՐԱՄԱՅՐ

ՍԱՌԸՐ ՄԵՐԻԱՄԱՆ

ՕՐԻՈՐԴՈՅ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆԻ

ԲԱՑԱՌԻԼԸ։

A 1/16996

1864

ՀԱՌՈՒՀԻ։

Հրամանաւ Բարձր Սրբազան Վրթակա-
ւոր Առաջնորդին Գարաբաղու Տեառն
Ստեփաննոս Արքեպիսկոպոսի ։

2320



ԿԱՐԳԱՐԻՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂՈՒ ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄԱՑՐ ՄԱՐԻԱՄՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

ՀԻՄՆ ԵՒ ԵԳԱՏԱԿ

1. Հուշուայ Հայ տիկնանց միաբանութիւնը՝ շարժուած լուսաւորութեան սիրովը և աղջկանց կրթութեան վսեմ նշանակութեամբը տնտանեկան կենաց համար, որից կախեալ է ինչպէս իւրաքանչիւր մարդոյ երջանկութիւնը, այնպէս և ազգի բարօրութիւնը, հաստատում է Հուշիւմը Օրիորդաց Ուսումնարան ամէն կարգի աղջկանց համար։

2. Հուշուայ Օրիորդաց Ուսումնարանը կոչուում է Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարան։

3. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը գտնուում է Ղարաբաղու Սնորհալեանական վիճակի Հոգևոր Կառավարչի բարձր հոգատարութեան ներքոյ, ինչպէս զլխաւոր Հովվի վիճակին։

4. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց ուսումնարանը հաստատուած է երեւելի աշակերտուհեաց համար։

5. Պարարաղու Սուրբ Մարիամու Օրի-
որդաց Ուսումնարանի առարկայից դասա-
տուութիւնը պէտք է լինի Հայոց լեզուաւ

6. Պարարաղու Սուրբ Մարիամու Օրի-
որդաց Ուսումնարանի նպատակն է պատրաս-
տել լուսաւորեալ վարժապետուհիք և լու-
սաւորեալ մայրեր ։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

7. Հոգաբարձուհեաց թիւը չէ սահման-
ուած ։

8. Պարարաղու Սուրբ Մարիամու Օրի-
որդաց Ուսումնարանի Հոգաբարձուհի դառ-
նալու համար վճարուում է ամէն տարի վե-
ճանէթ արծաթ , Ուսումնարանը պահպան-
լու համար ։

9. Սուրբ Մարիամու Ուսումնարանի Հո-
գաբարձուհիք ընտրումեն իւրեանց միջից մի-
կին, Ուսումնարանի տեսչութեան պաշտօն
կատարելու և յանձնումեն նրան Ուսումնա-
րանի բոլոր կառավարութիւնը ։

10. Սուրբ Մարիամու Ուսումնարան
Տեսչուհին ընտրում է իրան օգնական և նշա-

նակում է վերակացուհիք աշակերտուհեաց վերայ հսկելու ։

11. Հոգաբարձուհիք իրաւունք ունին ամէն ժամանակ այցելութիւն անել Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանին ։

12. Սուրբ Մարիամու Ուսումնարանի ինչպէս պահելու և պահպանելու, նոյնպէս էլ ուսումն ընդլայնացնելու համար ընդունուում են նուէրք բոլոր ազգի անդամներից ։

13. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնը ունի իւր կնիքը և երկու ժապաւինեալ մատեան Օրիորդաց Ուսումնարանի Գարձ Հովանաւորի կնքով և ստորագրութեամբ. մէկի մէջ Ուսումնարանի մուտքը և ծախսը գրելու համար, միւսի մէջ ազգի անդամների նուէրքները գրելու համար ։

14. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնը իրաւունք ունի իւր նկատողութեամբը ընդունել Ուսումնարանը խնդ գերդաստանի աղջիկներ 'ի հաշիւ քաքերար անձանց ։

15. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին արձակում է Օգնականին, աշակերտուհիներին, վարժապետներին և Վերակացուհուոյն, Ղարաբաղու Նշխեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդովը։

16. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է ռոճիկ վարժապետներին, վերակացուհուոյն և ուրիշ ծառայողացը և անում է Ուսումնարանի ամէն ծախսերը։

17. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է տարեկան հրապարակական հարցաքննութիւն, պարզև է տալի գերազանց հանդիսացող աշակերտուհացը և տարեկան հանդիսի մէջ տալիս է լիովին հաշիւ նիւթական միջոցների և ուսումնական մասին համար։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ

18. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը դասաւանդում է ըստ ուսումնական մասին Ղարաբաղու Նշխեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի հսկողութեան ներքոյ։

19. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի դասատուութեանց համար Սուրբ Մարիամու Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է վարժապետներ Ղարաբաղու Նղեշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդովը։

20. Սուրբ Մարիամու Ուսումնարանի Տեսչուհին պարտաւոր է անմիջապէս հսկողութիւն ունենալ դասատուութեանց վերայ։

21. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Ուսումնարանի մէջ դասատուութեան առարկայքը սրանք են. 1. Կրօն, 2. Արբազան-պատմութիւն, 3. Հայոց լեզու, 4. Ռուսաց լեզու, 5. թուաբանութիւն, 6. Հայոց պատմութիւն, 7. Աշխարհագրութիւն, 8. Ձեռագործութիւն, 9. Այբբենագրութիւն 10. Նկարչութիւն և 11. Նրգեցողութիւն։

22. Այ երակացուհիք պարտաւոր են հսկողութիւն ունենալ աշակերտուհեաց վարուց վերայ նրանց Ուսումնարանումն եղած ժամանակումը, ձեռագործութիւն սովորցնել և նայեցողութիւն ունենալ դասերը պատրաստելու համար։

23. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը աշակերտուհի սակ

ցանկացողները պարտաւոր են խնդրագիր տալ Սուրբ Մարիամայ Աստուածածնի Տեսչուհւոյ անունովը ։

24· Ամէն մի աշակերտուհւոյ համար վճարուում է տարին տասն և հինգ մանէթ. թղթի գրքերի ու ձեռագործութեան նիւթերի հոգացողութիւնը անում են աշակերտուհեաց տէրերը ։



Պ. ԱՐԱԲԱՂՈՒ ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄԱՑՐ ՄԱՐԻԱՄԱՅԻ

ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

ԲԱՑՈՒԹԻՒՆ.

1864 թիւը Պ. արաբաղու համար բաց արեց մի ընդարձակ ասպարէզ աշխարհքիս տարեգրքի մէջ, փետրվար 27 սուրբ Պ. արդանանց տօնի օրը Պ. արաբաղը զգաց իւր մէջ այն ազգայնութեան և կրօնի հոգին, որով փառաւոր են եղել 1400 տարի յառաջ Պ. արդանանք և իրենց փառկասուն տիկնայքը։ Պարզապէս երևեցաւ, թէ Պ. արաբաղու ՀՀայ տիկնայքը շատ մեծ հակամտութիւն են ունեցել դէպի ազգային գործքերը։ Հրանք նկատել են, որ Պ. արաբաղու լուսաւորութեան գլխաւոր միջոցներից մէկն է աղջկանց ուսումնարանը և այդ խորհուրդը գործացնելով իրենց սրտումը, կամեցել են Պ. արդանանց տօնի օրումը գլուխ տանել և նմանիլ նրանով այն երանելի կանանցը, որ ազգի և կրօնի համար իրենց անձն անգամ չեն խնայել, կամեցել են նմանիլ այն տիկնանցը և աղդութեան ու կրօնի հոգին արմատացնել իրենց

սեռի ամէն մի անհատի մէջ։ Ազգասէր տիկին Մարիամ Հախումեանցը լինելով շարժուած և լցուած այս վսեմ նպատակի գիրազանցութեամբն առաջինը յայտնում է իր քաղաքացուհի ընկերակցացն իր բարի միտքը, որի կրակն երկար ժամանակ է բորբոքուած է եղել իր ջերմեռանդ սրտումը, կանանց սեռի կրթութիւնը նա նախապատիւ է համարել ամէն բանից ներկայումս։

Այս այս օգտաւէտ միտքը, կարծես թէ, Շուշուայ տիկնանց բոլորի մտաց առաջին առարկայ է եղել և ոչ ոք կամ չի վստահացել կամ թէ դեռ չի սկսել իր մտաց խորհուրդը յառաջ տանելու. իսկոյն և իսկ Տիկին Հախումեանցի առաջարկութիւնն և գորովագութ աղերսախառն խնդիրը սիրալիր հաճութիւն է գտել իր քաղաքացուհեաց մէջ. ուրախութիւնն ամէնքի համար ընդհանուր է եղել և զոհաբերութիւնը հասարակաց։ Շուշուայ աղնուամիտ Տիկնայքը բոլոր հոգացողութիւնը յանձնել են Տիկին Հախումեանցին, որ նա իրենց կողմանէ խնդրամատոյց լինի գրաւոր կերպիւ Նորին Բարձր Սրբազնութեան Առաջնորդին Պարապետ Տեառն Սոկիմանոս Ազգասէր Եպիսկոպոսին և խնդրէ Նորա բարձր հովանաւորութիւնը։

Սուրբ Վարդանանց տօնի օրն այս խնդիրքը մատուցուում է Տիկին Ախումեանցից Նորին Բարձր Սրբազնութեան, որի օրինակը և սրա հետ էլ միւս գրաւոր գործերի օրինակը պարտք ենք համարում ներկայացնել այս տեղ։

ՍՊԵՏԱԿԱՆ ՀԱՅՏ՝

Գիտելով Ձեր սէրը դէպի ազգային լուսաւորութիւնն և հաստատ լինելով, որ ամէն մի ազգային գործն, առաւել ևս ազգային լուսաւորութեան, ցանկալի է Ձեր Արքայազնութեան ազգասէր սրտին, ևս Շուշոյ քաղաքի տիկնանց կողմանէ՝ դիմում եմ Ձեր Արքայազնութեանը և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալ Օրիորդաց համար Սուրբ Մարիամու անունով Ուսումնարան, արժանացնելով ընդունել Ուսումնարանը Ձեր Արքայազնութեան բարձր հովանաւորութեան ներքոյ։

Ընդ սմին խնդրում ենք խոնարհաբար առաջարկել Ղարաբաղու հոգևոր Դպրոցի Տեսչին ընդունել Ուսումնարանի ուսումնական մասի կառավարութիւնը, համաձայն այն կարգադրութեան, որ ընդ սմին ներկայացնում եմ Ձեր բարեհաճութեանը։

Յանձնելով զանձինս մեր օրհնութեան Ձերում, մնամ խոնարհ դուստր Ձեր Մարիամ Ջախումնց։

Ի 27 Փետրվարի 1864 ամի։

Ռ. Շուշայ։

Նորին Բարձր Սրբազնութիւնը յիշելով այն աւուր մեծ նշանակութիւնը Հայոց ազգի համար, Ղևոնդ է հանդիսանում հինգերորդ դարու Հայ տիկնանց ազգասիրութեան հոգին աւելի ընդարձակելու Շուշուայ տիկնանց մէջ. առանց ուշացնելու շտապում է խրախուսել բարեպաշտուհի տիկնանցը չդադարել իրենց մեծ ձեռնարկութիւնից և առանց մի ժամ ևս յետ ձգելու գրաւոր հրաման է տալիս այս Ուսումնարանի բացմանը, խնդրելով և Տեսչին Գարարաղու Հայոց Հոգևոր Գաղրոցի գնդապետ Պետրոս Շանշեանցին չմերժել Շուշուայ Հայ տիկնանց կարևոր խնդիրը և համաձայն նրանց խնդրագրոյն ընդունել իրեն վերայ ուսումնական մասի կառավարութիւնը։ Պ. Շանշեանցն ազգասիրաբար ուրախ լինելով այս գործոյս, մեծ յօժարութիւն է ցոյց տալիս։ Եւ ահա Նորին Սրբազնութեան գրաւոր հրամանն և օրհնութիւնը հասնում է Տիկին Հախումեանցին. ուշ միայն այդքանը, գրա հետ էլ ազգային յառաջադիմութեան առ 'ի սրտէ միշտ ցանկացող Սրբազանը յանձն է առնում իրեն վերայ երկու որբ և աղքատ աշակերտուհեաց տարեկան ծախսը և հանդերձը հոգալ և բացի գրանից էլ խոստանում է

տարին երեսուն մանէթ նուէրք տալ Աղա-
բաղու Սուրբ Նարիսմու Օրիորդաց Ա-
սուճնարանին։ Ցիկին Հախումեանցը Փուֆա-
պէս Նորին Բարձր Սրբազնութեան հրաման
և ազգասիրական խրախոյսը ներկայացնում է
Շուշուայ Հայ տիկնանցը, որոնք շուտով
շնորհակալութեան մի թուղթ ուղարկելով
Նորին Սրբազնութեանը, խոստանում են ա-
ւելի և աւելի եռանդ ցոյց տալ այս ազգային
գործոյ մէջ։

ԲԷՐԹՂԵՐ ՏՈՒՆԻ ՏԻԿԻՆ

Ընդունելով Ձեր առաջարկութիւնը Շուշ-
ւայ քաղաքի Տիկնանց կողմանէ Օրիորդաց
Ուսումնարան բանալու համար, ուրախ սրտիւ
զովում եմ Ձեր և միւս բարեպաշտուհի Տիկ-
նանց ազգասիրական ձիգն այսպիսի ամենա-
հարկաւոր ազգային լուսաւորութեան և յա-
ռաջադիմութեան միջոցը յառաջ տանելու
համար. ուստի և խնդրելով Ամենակալ Աբար-
չից Ձեր ձեռնարկութեանը յաջողութիւն,
հաստատում եմ այդ Ուսումնարանը համա-
ձայն կարգադրութեան նորին "Ղարաբաղու
Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարան,,
անուամբ և տալիս եմ իրաւունք բանալ այդ
Ուսումնարանը մեծաւ փութով։

Ղարաբաղու Նղիշեան Ազգային Հոգևոր
Դպրոցի Տնօրէն Պ. Հանշեանցն ևս յարգե-
լով իմ առաջարկութիւնն՝ ընկալաւ սիրով
Տնչութիւնն Օրիորդաց Ուսումնարանումն
և պատրաստ է կատարել ամենայն յօժա-
րութեամբ։

Յոյս ունելով, թէ Ձեր բարի սկսուածքը
յառաջ կըտանէք մեծ ջերմեռանդութեամբ,
օրհնում եմ այդ ընդհանուր շարժողութիւնն
այս ազգային լուսաւորութեան ասպարիզի

մէջ, կնքելով իմ սեպհական կնքով Հ[illegible]
ուղարկած երկու մատեանները, սիրով ընդունելով իմ վերայ Ալսումնարանի կարգադրութեան երրորդ յօդուածի մէջ յիշեալ հովանաւորութիւնը։

Հովանաւոր Պարարաշրջանի Սուրբ Աստուածածնայ Օրիորդաց Ալսումնարանի
Ստեփաննոս Եպիսկոպոս։

Համար 59.
Դ. 27 Փետրվարի 1864 ամի.
Ի Վ. Շուշի։

ԲԱՐԵՀԱՃԵԱԼ ԱՌՅՈՐ·

Հուշուայ Տիկնանց հասարակութիւնը խորին սրտի շնորհակալութեամբ ընդունում է Ձեր բարեհաճեալ ուշադրութիւնը դէպի նրանց, որ ցոյց տուին մեր այս նոր ազգասիրական գործի մէջ լուսաւորութեան ասպարիզում, տալով մեզ իրաւունք Օրիորդաց Ուսումնարան բանալու Ձեր հովանաւորութեան ներքոյ։ Այս իմ կողմանէ Ձերդ Սրբազնութեան ցանկութիւնը փութով կատարելու համար առաջարկում եմ Ուսումնարանի բնակութիւնը իմ տանս, տալով հինգ սենեակ։ Յոյս ունենք, որ Ձեր օրհնութեամբ սկսուած ազգային լուսաւորութեան գործն ունենայ ապագայի համար մեծ նշանակութիւն։

Յանձնելով զանձինս մեր օրհնութեան Ձերում, մնամ խոնարհ դուստր Ձեր Մարիամ Ախումեանց։

163296

13-ն Մարտի 1864 ամի·
Հուշայ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ստորագրութիւնը բացու

Բրդէն ամէն բանը պատրաստ, Նորին Արքայազնութեան գրաւոր բարեհաճութիւնն ընդունած, ուսումնական մասի կառավարիչը իր պաշտօնը սիրով յանձն առած, էլ ի՞նչն է պակաս Ուսումնարանի սկզբնաւորութեան համար, ի՞նչի չենք լսում գեռ սրա բացման լուրը, մի՞ թէ չկան վերատեսչութի կամ վերակացութիւնք և ուսուցիչք. ոչ. վերատեսչութիւն գործն ինքը ցոյց է տալի, թէ ոչ պէտք է լինի։ Հուշուայ ազգասէր տիկնայքն իրենք շատ լաւ են ճանաչել այդ ինքնագոհ անձին։ Ձողով.ք են գումարում, միաձայն ընտրում են Տիկին Մարիամ Հախումեանցին և խնդրում են յանձն առնուլ Տեսչութեան պաշտօնը։ Նա այդ ծանրութիւնն էլ ուրախութեամբ տանել է յանձն առնում՝ չնայելով իրեն օրինաւոր արդելառիթ պատճառներին. նա միշտ պատրաստ է ընդհանուր գործքն իր սեպհականից բարձր համարել։ Բայց էլ ի՞նչ է պակաս, աշակերտութիւնքը. ոչ և նոքա նշանակուած են վաղուց. իսկ ոչ, վերակացութիւն. ոչ և նա նշանակուած է, աշխարհքիս հոգսերից հեռացած, իրեն անձը Հրիատոսին հաստատուած՝ կոյս Դղեսարեթ Սիմոնեանցը, որ՝ի մանկութենէ յայտնի է բոլոր Աստուածին իր պարկեշտ վարուքն և համեստութեամբը,

նա էլ իր կողմանէ չի խնայել այս աղքատ գործքին ծառայելու. իսկ ով ուրեմն, ուսուցիչք են պակաս. ոչ. Պարարաղու Հոգևոր Ազգային Դպրոցի ուսուցիչքն, երբ լսեցին տիկնանց կողմից այս մեծ զոհաբերութիւնն, իրենք անձամբ ներկայացան իրենց աղքատէր Տեսչին և խնդրեցին նրանից թարգման լինել իրենց ջերմեռանդ ցանկութեանը, ազնուամեծար տիկնանց մօտ իրենց անձնազոհ գործակցութիւնն և ծառայութիւնը ցոյց տալու համար՝ ուսուցանել խոստովանելով իւրաքանչիւրը մի միառարկայ ինչ և կնշանակուի նրանց ըստ կարողութեանցն, որոնց խնդիրը մեծաւ շնորհակալութեամբ ընդունեցին Հոգաբարձուհի տիկնայք և յայտնեցին իրեն լիակատար գոհունակութիւնը։ Ապա ի՞նչն է ուրեմն արգելքը, կըհարցնէք, որ ամէն կողմանէ զոհաբերութիւնն և կամակցութիւնը պակաս չէ, իսկ Ուսումնարանի բացմանը դեռ սպասուում է։ Հէնց այդ է, որ ամենամեծ և օրինաւոր պատճառ կար և ահա չեմ դանդաղում յայտնել։

Արդարութիւնից երևում է, որ Ուսումնարանը նուիրած է յանուն պաշտպան Տիրամայր Սուրբ Աստուածածնի և նորա անուամբն է հաստատուած։ Հուշուայ աղքատէր տիկնայքը կանանց սեռի մեծ միջնորդ սուրբ Աստ-

ուածածնի շնորհքն և պաշտպանութիւնը խնդրելով, ուխտեցին բանալ այս Ասուծոյ-բանը Սուրբ Աստուածածնի Աւետեաց օրն. այդ օրն աւետում է աշխարհքին Փրկչին ազգի մարդկան, այդ օրը դրա հետ միասին էլ աւետում է Ղարաբաղին և բոլոր Հայաստանին կանանց սեռի լուսաւորութեան ճանապարհը բացուած լինելը։

Արքելի եօթին ամէնքս անհամբեր սրտով սպասում էինք, ամէնքիս սրտերը թնդում էր խնդութիւնից, քանի որ այդ օրը մտնում էր, երևակայում էինք այդ օրը այն երջանկութեան սկիզբը, որ պէտք է ունենար Ղարաբաղու Հայ կանանց սեռն, երևակայում էինք այն ապագայն, որ այդ օրովը երջանկանալու էր Ղարաբաղու Հայերի համար, և ահա, ահա, ահա հասաւ այդ օրը. ո՜հ ի՞նչ մեծ նշանաւոր օր, Հայ ազգի համար ի՞նչ վսեմ օր, թող ամէն Հայ տիկիններ և պարոններ մտնեն իրենց սրտի խորքն և մի խորհրդակցութիւն անեն իրենց մտաց հետ, իրենց հոգւոց հետ այդ մեր ցանկալի և համբերութեամբ սպասած օրուան համար, թող խորհրդակցին և տեսնեն, թէ կանանց սեռի կրթութիւնից ի՞նչ մեծ երջանկութիւն է կախուած ազգի համար։

1864 թուի Ապրիլի եօթն է։ Սուրբ Աստուածածնի աւետեաց օրը քանի՞ քանի սրտեր են բարախում Հուշիւմը, հանում է նշանակեալ ճաշից յետոյ երեք ժամը, հանդիսականք՝ Հոգարարձուհի տիկնայք իրենց ամուսիններով հրաւիրուած են Օրիորդաց Ուսումնարանումը՝ Տիկին Հախումեանցի տանը։ Տիկին Հախումեանցն էս բանումն էլ ի՛նայել իրեն ձեռնտուութիւնը, որ ինչպէս առ Ներին Բարձր Սրբազնութիւնն ուղղած երկրորդ թղթից երևում է, իրեն սնպհական տանից տուել է հինգ սենեակ Օրիորդաց Ուսումնարանի համար, կատարելով Սրբազանի պատուէրը, մեծ փոյթ տանելով Ուսումնարանի համար։

Սենեակը՝ որ տեղ պէտք է դասատուութիւնը սկսուէր, պատրաստուած էր օրինաւորապէս։ աջակողմը պատի վերայ պաշտպանն Ուսումնարանիս միշտ կոյսն Մարիամ իր մանկացեալ Փրկիչը գրկին առած, ուրախ սրտով միջնորդ էր լինում էս գործի յաջողութեան համար։ միւս կողմը Հայաստանի Ոգին՝ (*) նստած աւերակաց վերայ, ձեռը ծնօտին, որ լալիս էր,

(*) Ոգին Հայաստանի, Փարիզ տպած։

այսօր կարծես թէ, մի փոքր նշուլով ուրախ ժպիտի իրեն երեսը փայլեցրել՝ նայում է դէպ 'ի այն մատաղ դառնուկներն, այս սիրասուն երեխայքն, ասելով այսպէս. իմ յոյսը ձեզ և ձեզապիսիներու վերայ է, կարծես թէ արտասուալից աչքերը դէպ 'ի Ն՚ջմիածին և Ն՚բարատը դարձրած՝ ասում էր. դուք էլ զգացէք փոքր ինչ ուրախութիւն, մեր որդիքն ամէն տեղ սկսում են մեզ յիշել։

Դասատան նստարանները կարգին դարսած և ամէն ինչ տեղն 'ի տեղը պատրաստ էր, Ն՚արարաղու Հոգևոր Դպրոցի աշակերտք կարգաւ կանգնած էին մի կողմը, տիկնայք և պարոնները իրենց նշանակեալ տեղերը բազմած, աշակերտուհի որդեգիրք իրենց դասատան մատեանները ձեռքներին, սպասում էին ընդունել Ալսուսմնարանիս յառաջադիմութեան մեծ խրախուսողին, և ահա հնչեցաւ Նորին Բարձր Սրբազնութեան զալուստը։

Հոգևոր Դպրոցի աշակերտք, որ աչքները կրթած ունէին դրան փեղքի բացուելուն, Նորին Բարձր Սրբազնութեան ներս մտնելու պէս հնչեցին քաղցրաձայն "Ն՚յոյծ ՅԸՆԴՀԱՆ ԵՐԿՆՈՅՆԻ", շարականն, ուրախութիւնն ամէնքին երեսին փայլում էր։ Նրբ որ բազմականք հանգստացան իրենց տեղերը, Հոգե-

ւոր Դպրոցի յառաջադէմ աշակերտներին մէկը՝ Հայկ Խաչատրեանց բարձր և ազդու ձայնով կարդաց կանանց լուսաւորութեան և դաստիարակութեան մեծ նպատակին յարմար ճառը, որի իսկականը գտնում ենք այս տեղ։

ՍՐԲՈՅՆ ՀԱՅՐ

ՊԱՐՈՒՆԵՐ

ՏԻԿԻՆԵՐ

Միայն առէք ինձ այսօր, դարձնել ձեր
ուշադրութիւնը մի առարկայի վրայ, որ կեն-
անի կապով կապուած է կանանց լուսաւո-
ութեան այս հոգեւոր տաճարի հետ, որ
ուք այսօր հաւաքուել էք հիմնարկելու.
Միայն առէք ինձ խօսել կանանց մեր կեանքի
ոայ ունեցած ներգործութեան համար,
որոնց ձեռքին է ոչ միայն երեխայից ապա-
այն ,, ինչպէս ասաց Մեծն Նապոլէօնը,
ալ և բոլոր մարդկութեան ապագայն։
Կանանց այս ներգործութիւնը սկսում է
ր մանկութիւնից և շարունակուում է մեր
մրողջ կեանքը։ Ամէն է յանձնում բնաւ-
իւնը մեր կեանքն. եթէ ոչ մայրական սիրոյն
Մարդս՝ այս Աստուածային Արարչութեան
լարդն՝ աշխարհք է գալի ամենատկար քան
լոլոր արարածները. հազիւ նա շունչ է առ-
ում, սկսում է լացի ձայն հանել, կարծես
է, նա վեր ընկած լինի մէկ մեծ բարձրու-
իւնից. նրան ճնշում է երկրիս շնչառու-

թիւնն ու նրա նոր վիճակը։ Լալով նա աւ-
ուում է իր աշխարհ գալը, զարթնացնում է
ֆարեկցութիւն և միայն նա կարող է հան-
գստացնել նրան, ով որ ծնել է նրան ցա-
ւով, ով է կարող զարթնացնել երեխայում
քաղցր ժպիտ, եթէ ոչ մայրական ուրախու-
թիւնն և բարեսիրութիւնն. ով է կարող
գուշակել երեխայի հոգւոյ շարժմունքը, ով է
կարող զգուել և լուսաւորել նրա խիղճը,
եթէ ոչ երեխայի մայրը։ Այնցէք, թէ մայր
ի՞նչպէս քաշում է երեխային դէպի ինքն՝ իր
զեղեցկութեամբը, ջահելութեամբն և որ ա-
մէնից մեծն է՝ իրա սրտով։ մայրական հա-
բերութիւնը լցնում է երեխայի անսահման
հետաքրքրութիւնը, մայրական սէրը պահում
է երեխային վնասակար բաներից. այս սէրը
թեթևացնում է երեխայի վրայ ունեցած ան-
չափ հոգացողութեանց ծանրութիւնները. վեր
ջերուումն երեխայի և մօր իրար հետ խաղալու
և խնդալու ցանկութիւնը դառնում է մի
նոր քաղցր կապ մօր և երեխայի մէջ, ամէն
բանը նրանց մէկ մէկու հետ կապում է, ինչ-
պէս համաձայնութիւնն, էնպէս էլ ընդդի-
մութիւնը. և այս մայրական զեղեցիկ ձիրքի
մէջ, որը որ է համբերութիւնը և հսկողու-
թիւնն, ինքը բնութիւնը ցոյց է տալի յայ-

տապէս, թէ ո՞ւմն է հաւատացել մեր մանկութիւնը, ո՞վ է մեր երջանկութեան պատճառը։ Այո՛, Տեա՛ր Աստուած, մայրական ներգործութիւնը կնքում է իր դրոշմը մեր սրտի զգացմանց վրայ, մեր մտաց վերայ, մեր կենաց վրայ. այս մայրական ներգործութիւնը մեր հոգւոյ վերայ է մեր նախատատհմանութիւնն, ինչպէս ասաց Նապոլէոնն. "երեխայի ապագայն մօր ձեռքին է"։ Շատ անգամ ասում էր Նապոլէոնը, որ աւելի իր մօրն է պարտական, որ ինքն իր կեանքումն այնպիսի մեծութիւնին հասաւ։ Մայրերի ներգործութեան տակն են աճում երևելի բանաստեղծական հոգիներ. Դանտէն, Լամարտին, Ենդրէաս Շենիէ, Հիւգօ, Շիլլեր և այլք։ "Այս իմ մայրս է", ասում է Գոետէ, Գերմանացւոց երևելի բանաստեղծը՝ "որն որ տուաւ ինձ իր կենդանի ուրախութիւնով ճաշակ գրութեան, ճաշակ զգացողութեան ու բանաստեղծութեան։

Այո՛, Տեա՛ր, միայն մայրը կարող է տալ մեզ բանաստեղծութիւն, բարեպաշտութեան հոգի, թափանցել մեր մէջ առաքինութիւն, սորվեցնել մեզ, որ մենք փողից, հարստութիւնից գերազանց համարենք բարի անունը, գերազանց համարենք մեր ազգի երջանկութիւնը քան զմեր սեպհականը, սիրենք մեր

ընկերներին, օգնենք տարաբաղտներին, բարձ
բացնենք մեր հոգին դէպի աղբիւրն ամենայ
գեղեցկութեան և բարութեան՝ որ է Աստ
ուած։ Ասացէք, ով սուրբ Օգոստինոսի
դարձրեց դէպի ճշմարիտ Աստուածն, եթէ
ոչ նրա մայրը՝ սուրբ Մոնիկը, ով դաստիարա
կեց սուրբ Յովհան Ոսկեբերանին, եթէ ոչ
նրա մայրն, ով սուրբ Խարսեղ Կեսարացուն
կանգնեցրեց փրկութեան ճանապարհի վերայ,
եթէ ոչ նրա մայրն. ով Գրիգոր Աստուա-
ծաբանին բերեց եկեղեցին նրա երեխայութեան
ժամանակը և տուեց նրան Աւետարանը շո-
շափել, նայել, և կարծես թէ, կամենում էր,
որ այս շօշափմունքով ու նայելով Աստ-
ուածային հոգին անց կենար նրա ջիղերով
նրա սիրտը, ով էր այս անողն, եթէ ոչ
նրա մայրն։ Ով ծնեց և մեծարեց այն վեհ
և քնքուշ հայրենեաց որդիքներին՝ այն ա-
ռիւծի նման հզօր և գառան նման հեզ
Արդանանց նահատակներին, եթէ ոչ մայրն
ը. այսպիսի քնքուշ մայրերն են, որոնց զո
հաբերութեան հոգին նկարագրում է մեղ քաղ-
բախտ Զրեհին, այսպիսի մայրերն են, որոնց
միայն կարող են ներշնչել ոչ թէ այն հայրե-
նասիրութիւնը, որ սահմանափակուում է միայն
օտարին ատելութեան մէջ, այլ սէրը, որ մե

մէջ ծնում է այն Աստուածային զգացողութիւնը, այն եղբայրական համակցութիւնը, որ տալիս է ազգի բոլոր անդամներին մի սիրտ, մի հոգի, մի միտք. միայն այսպիսի մարդերը կարող են սորվեցնել, թէ մեր աշխարհքից բարձր կայ մին ուրիշ աշխարհք, թէ մեր հայրենիքից բարձր կայ մարդկութիւն և մարդկութիւնից բարձր է մեր պաշտելու առաջին և սրբազան առարկայն Աստուած։ Ով որ իրեն մօրը չի ունեցել մանկութեան ժամանակ իրեն դաստիարակ, նա կարող է, այո, սրտի բնական շարժմունքով հաւատել բարեպաշտութեան, բայց նրա յարաբերութեանց մէջ առ Աբարիչն կրոնական, կարծես թէ, մի տեսակ ընտանեկան կապ, որ հին է քաղքը զգացմանց, որովհետև մայրական փափուկ զգացմունքը չէ զարթնեցրել նրա մէջ սէր առ Աստուած։

Եթէ աշխարհքումս մի ճշմարիտ բան կայ, այս կանանց ներգործութիւնն է մեր բոլոր կենաց վրայ, այս ներգործութիւնն երևում է որդիական կապի և ամուսնական սիրոյ մէջ. մարդը խորհրդակցում է կնոջ հետ, հնազանդուում է իր մօր կամքին, կատարում է նրա կամքը երկար ժամանակ, նաև նրա մահից յետոյ էլ, և էն համոզմունքը, որ սատ-

ցել է իր մօրից, արմատանում են նրա սրտի մէջ և այս համոզմանցը շատ անգամ կիրքերն էլ չեն կարողանում յաղթել։

Այո, Տնարք, մէկ երկիր կարող է փոխել իր օրէնքները, կարգերը, բայց մէկ բան կայ, որ կեանքի մէջ մնում է անփոփոխ. այս կանանց զօրեղ ներգործութիւնն է մարդկանց բարուց վերայ. կինը՝ թէ ազատ և թէ փակուած լինի, այնու ամենայնիւ նա միշտ պահում է իր իշխանութիւնը մեզ վերայ, որովհետև նա իր այդ իշխանութիւնը ստանում է մեր սրտից՝ մեր կրքերից։ Կանանց այս ներգործութիւնը, նայելով նրանց լուսաւորութեան աստիճանին՝ լինում է շատ կամ քիչ օգտակար, շատ կամ քիչ բարեպատուղ, ըստ չափու յարգանաց, որ տալիս են նրանց մարդիկը. թէ ամուսին՝ թէ տղաքուկ լինին նոքա այսու ամենայնիւ շինում են մեղ էն, ինչ որ իրենք են, կարծես թէ, բնութիւնը կապել ուշ միայն մեր լուսաւորութիւնը նրանց լուսաւորութեան հետ, նաև մեր յարգանքը նրանց յարգանաց հետ, ինչպէս և մենք կապուենք մեր երջանկութիւնը նրանց առաքինութեան հետ։ Հաւիտենական արդար օրէնք այս է. որ տեղ կինն անարգուած է, այ տեղ էլ մարդն ընկնում է անարգութեան վի

մէջ, իսկ ինչ տեղ կիներն ընթանում է լուսոյ և ճշմարտութեան ճանապարհովն, այն տեղ էլ մարդն իր նշանակութիւնն է ստանում։

Այս խօսքերս ճշմարտելու համար աչքներս դարձնենք դէպի քրիստոնեայ և անքրիստոնեայ ազգերը. որ տեղ է տղայ մարդը պահել իր պատիւը, որ տեղ է հասարակութիւնները ծաղկուած և բացուած գիտութեամբ և արուեստով, եթէ ոչ այն տեղ, որ տեղ կիներն ընթանում է լուսոյ և ճշմարտութեան ճանապարհով, որ տեղ կիներն ամուսին է և ոչ թէ գերի կամ ստրուկ, որ տեղ հաստատուել է ջերդաստուն և ոչ կանանոց, որ տեղ կինը մայր է, որ տեղ ամուսնութիւնը սուրբ կապ է և ոչ թէ ստրուկների առուտուր։

Ահա, մէկ որբ՝ խլուած իրեն մօրից՝ ծախուած կանանոցի համար. ահա քո կենաց ընկերներից մէկը՝ քո որդւոց մայրերից մէկը Սահմանին երկրպագող. դու օտարաց մօտ արդար, դու աղքատաց ողորմած և դու չեն ուզում տալ, չեն ուզում սնոպհանել քո կնոջը մարդկային յարգանքը. դու նրանից պահանջում ես քեզ համար բաւականութիւն՝ և հոգւոյ սէր քոյ որդւոց համար. հոգւոյ սէր, բայց ով պէտք է քո որդւոց մէջ ներշնչի այդ սէրը։

Չկայ այնպիսի ազգ, որ ունենար ճշմարիտ կրօն ու սիրէր նրան և չխոստովանվի կանանց ներգործութեան մեծ նշանակութիւնը ճշմարիտ կրօնը տարածում է լուսաւորութիւնը, հաստատում է ամուսնութիւն, ընտանեկան կեանք, որից կախեալ է միաբանական և ազգային կեանքը. որովհետև գերդասատանի մէջ ծնում և աճում են բարոյականութիւն, համոզմունք, առաքինութիւնք, մի խօսքով մարդկան ազգի բոլոր մեծանձնութիւնն. ընդ հակառակն անքրիստոնէութիւնն անլոյս է առնում ազգին, զրկում է ընտանեկան կեանքից և ծնում է բազմակնութիւն, որ մի թշուառ վիճակ է, որ կանանցը ստրուկ է շինում, այն ինչ ամուսնութիւնը կանանցից ընկեր է տալի մարդուն. այս բազմակնութիւնը ծնում է անբարոյականութիւն մարդոց բնակարանումը, այն ինչ ամուսնութիւնը հարատևում է միշտ մեղքերին և լուսաւորում է քրիստոնէի տունն.—

Ցանկանում է՞ք, Տեսնք, իմանալ, թէ որ ջից աւելի՞ նշ է պակաս մեր հայրենեաց ներկայ ժամանակս.— Օգուտաբերութեան, մեծանձնութեան և ազգասիրութեան հոգի. մենք ունինք վաճառականներ, ունինք հեղինակներ, աստիճանաւորներ, իշխաններ, բայց մար-

[illegible] շատ սակաւ, և աւելի սակաւ՝ հայրեասէրք. գլխաւորն՝ եթէ ոչ միակ պատճառն այս ցաւալի վիճակի, Տեսէք, այն է, որ չունիք մայրեր։ Ոչ, կան մայրեր, բայց նրանք հնշուած են միայն նիւթական հոգսերով, խեղդուած են նիւթապաշտ կեանքով։ Չի՞կան այն մայրերը, որոնք կարողանային դաստիարակել իրենց երեխայիցը Քրիստոսի հոգւով, զոհաբերութեան հոգւով, սիրով առ Աստուած և առ ընկերն, չի՞կան այն մայրերը, որոնք իրենց երեխայից հոգևոր ծնողիամբը բազմացնէին Աստուծոյ և հայրենեաց որդիքներ, ինչպէս մարմնաւոր ծնողիամբը բազմացնում են նրանք մարդկային ազգը։ Այր և կին լինելու համար բաւական չէ լինել տնտես, հրամաններ տալ ծառաներին և միայն հոգալ նիւթական բարօրութեանց համար. պէտք է անել այս ամէնը, բայց միայն սրանց մէջ չէ կայանում նրանց կոչումը, միայն սրանց մէջ չէ պարունակում՝ սիրել, աղօթել, մխիթարել, սրանց մէջ չէ պարունակում իրենց կոչումը՝ կրթել և առաջնորդել երեխայից, որը որ միայն կանայքն ունեն ձեռք կատարելու։

Ինչ իր մեծ կոչումն արժանապէս կատա-

բելու համար, որ նրա ամենազօր ներգործու-
թիւնը պտղաբեր և շահաւէտ լինի ազգի բա-
րուց վերայ, երեք բան է հարկաւոր. առա-
ջին՝ լուսաւորութիւն. երկրորդ՝ լուսաւո-
րութիւն և երրորդ՝ էլի լուսաւորութիւն:
Հարկաւոր է կնոջ միտքը զարգացնել դի-
տութեանց մէջ, պատրաստել նրան մարդու
խորհուրդներին և իր որդկերանց ուսանել
մանակից լինելու: Լուսաւորութիւնը կապ է
ամուսնոց մէջ, իսկ տգիտութիւնն արդեալ
լուսաւորութիւնը մխիթարութիւն է, իսկ
տգիտութիւնը հալածող: Տգիտութիւնը ծը-
նում է հազար տեսակ պակասութիւններ
հազար տեսակ մոլորութիւններ կանանց հա-
մար: Սաղէ՛ք ինչու համար այս ինչ կին
մեռնում է ձանձրութիւնից, սրտանեղութի-
նից: Ընդուր, որ զրկուած է լուսաւորու-
թիւնից: Ինչու համար այս ինչ կինը պրն-
նամել և ունայնասէր է: Ընդուր, որ նա
զուրկ է լուսաւորութիւնից: Ինչու համար
այս ինչ կինը դատարկ և չնչին բաներ ա-
նելու համար չի խնայում իր մարդի ամու-
կան աշխատանքը: Ընդուր, որ զուրկ է լու-
սաւորութիւնից, նա օտար է մտաւոր և բա-
րոյական աշխարհքի համար, նա զրկուած
է իր պարտաւորութեան ճանաչողութիւնից

ինչպէս մարդ, ինչպէս անդամ ազգի և ինչ-
պէս անդամ եկեղեցւոյ։ Ընդհանրութիւնը կա-
նանց կրթութեան համար մեր հայրերին ան-
ներելի էր, իսկ մեզ համար անպատճառ դա-
տապարտելի, մեզ համար, որ զգում ենք, թէ
կանանց լուսաւորութիւնն աւելի նշանաւոր
է քան թէ ազգայ մարդոցը, որովհետև օրօրո-
ցից մինչև գերեզմանը նրանց ներգործու-
թեան տակն ենք։ Մենք զգում ենք, որ կա-
նանց լուսաւորութեան համար հոգալով մենք
հոգում ենք մեր սեպհական լուսաւորութեան
համար։ Ով որ կանանց մէջ կընդարձնի
իրական և արժանաւոր մտքեր, նա մի հար-
ուածով կրոշնչացնի մեր հնչին կրքերն և մեր
հրատական ցանկութիւնները։ Որքան գերա-
զանց լինին կանայք, էնքան արժանաւոր կը-
լինինք մենք, և երբ որ նրանք մեզ կերջան-
կացնեն, իրանք էլ էն ժամանակն երջանիկ
կը լինին։

Տիկիններ, դուք՝ որ պատճառ էք այս
կանանց լուսաւորութեան մեծ գործին, դուք՝
որ այսպէս համեստութեամբ սկսեցիք այսքան
նշանաւոր գործը, զգո՞ւմ էք արդեօք, թէ դուք
ալիս էք ազգին նոր հոգի, նոր կեանք, ազ-
գին՝ որ ձեր անուններին կը պահպանէ իր սրտի
մէջ երբեմն յաւիտեան, էնդուր, որ այս Սուրբ

Աստուածածնի Աւետեաց մեծ օրը, աւետեցիք ձեր հայրենի երկրին՝ Պարսքաստանին և Հայաստանին, թէ այս օրուանից բացուած է աղջկանց համար լուսաւորութեան ճանապարհ, որ կըտանի նրանց դէպի Աստուած, դէպի ապրն և դէպի ապագայ կեանքը, լուսաւորութիւնը ցոյց կըտայ նրանց կենաց նպատակը և ճանապարհը դէպի այն նպատակը։

Տիկիններ, դուք էլ օրհնեալ լինիք այս օրուանից կանանց մէջ, այս օրուանից տէրը ձեզ հետ է այս ճշմարտութեան և լուսոյ ճանապարհումը, որի վերայ դուք ցանկացաք կանգնացնել այս փոքրիկ աղջիկներին, որ պէտք է տանի սրանց երենց Փրկչի մօտ, որն որ իր քաղցր ձայնովը տատ ուրեն դար է կանչում է նրանց. "Թոյլ տուէք էդ երեխայիցը գալ ինձ մօտ և մի արգելէք դրանց գալը, որովհետև դրանցն է երկնքի արքայութիւնը,, (1)։

Սրբազան հայր, Դուք՝ որ արթուն և անդադար ջանքով աշխատում էք մեր լուսաւորութեան համար, Դուք՝ որ առաջին անգամը օրհնեցիք այս լուսաւորութեան գործն, ընդունելով

(1) (Մատթէոս ԺԹ. 14։)

Ձեր բարձր հոգեանաւորութեան ներքոյ, Դուք
դնակէս առաջին անգամ լուսաւորութեան
ճանապարհը բացէք խաղաղի որդոց համար,
որոնց այնքան սիրում էր Ձեր Վարդապետը և
որոնց Դա ընտրեց երկրիս վերայ իրան ներ-
կայացնողներ, Դուք երկուսին ընտրեցիք յա-
ւն Ձեր Վարդապետի, որ ասաց, թէ "որ ոք
կալցի զմանուկ մի այսպիսի յանուն իմ,
ս ընդունի ,, (1)։

Դոյրեր, ձեր առաջին բացուած է այսօր
ւսաւորութեան նոր ճանապարհը, որ պէտք
առաջնորդէ ձեզ ձեր պարտաւորութիւնը
ճանաչելու և բոլոր ձեր ուշադիրքը պէտք է
դարձնէ էս օրուանից դէպի ձեր Աստուածը,
ձեր ազգը և ապագայ կեանքը, կեանքը որի
ամը խաղաղ է և անանց։ դուք պէտք է ձեր
ետ առաջև ունենաք այն բարեպաշտ կա-
նց պատկերները, որոնց համար Փրկիչն
ասաց։ " Մարթա, Մարթա, դու հոգաս և
ազում իւիք զբաղեալ ես, բայց ասա սա-
ւ ինչ պիտոյ է։ Մարիամ մասն բարի
արեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ ,, (2)։

---

(1) (Մատթէոսի ԺԲ։ 5։)
(2) (Ղուկասոս Ժ։ 41—44)։

Լուսիւնը համատարած էր այս միջ-
ցումն, ամէնքն ուշադրութեամբ լսում էին
ներգործութիւնը, որ ունեցաւ այս աղդա-
ձառը, շատ մեծ էր, օրուան նշանաւորու-
թիւնը՝ կանանց սեռի կրթութեան կարևորու-
թիւնը և այն փոքրիկ անմեղ աղջկունքը, որ
էսպէս կանգնած ուշադրութեամբ լսում էին,
այս ամէնը շարժեցին հանդիսականաց սրտերը,
ամէնի աչքերից էլ արտասուաց կաթիլներ
էին թափում, ամէն մի կաթիլը մեծ յոյս էր
խոստանում ՝ այաստանին :

Ընի քաղաքի դարերով մնացած աւերակ-
ները, որ մինչև հիմայ նստած լաց էին լինում
և ‘‘ Վայ ըսօղ մ՝ լա, մ՝ լա ,, այսօր կար-
ծես թէ, Շուշիում թափած արտասուքով
լուանում են իրենց վէրքն և ոդի են առնում
իրենց լացը դադարացնելու . վասն զի ձառ-
յեալոյ առնը թնդաց ‘‘Ընյոսը էրկնայինք ա-
խացան ,, շարականի հնչիւնն և ապա Ընի
յուսադրական հնուհնալ երդի քաղցրաձայ
ներդաշնակութեամբը, Շուշանիկ ողբերդու-
թեան ‘‘ Պարկեշտասուն ,, երդի եղանա-
կումը :

Մայր մեր Ընի՛, ցնծա այսօր անարտում,
քո որդիքը թմբուխիւնիցն են զարթնում.
լոյս արևը այսօր ծագեց Ղ՝ արարաղ,
մի՛ լար Ընի՛, նոր յոյս ենք քեզ աւետում։

Հրիքթափած գառն արտասուքդ, հիրիք կոծդ,
Հայոց Ընի՛, կըողջանան վէրքդ ու խոցդ.
լոյս արևը այսօր ծագեց Ղ՝ արարաղ,
մի՛ լար Ընի՛, լսի՛ր աղերս քո որդւոցդ։

Գանգատող է, թէ "չրկայ ըսող մի՛ լա մի՛,
այսօր տիկնայք քեզ աւետեն մի՛ լա մի՛.
լոյս արևը այսօր ծագեց Ղ՝ արարաղ,
ոարածուեցաւ յոյս զիտուխեան՝ փառքն ազգի։

Տե՛ս այս մանկունք, այս սիրասուն աղջիկներ,
գանք կարքեն արտասուալից քո աչքեր.
լոյս արևը այսօր ծագեց Ղ՝ արարաղ,
գանք խոստանան ապագային մեծ յոյսեր։

Զեզ աւետիք՝ մեծ աւետիք, Հայ տիկնայք,
ուսումնարանս կրկատարէ ձեր բաղձանք.
լոյս արևը ձեզնով ծագեց Ղ՝ արարաղ,
Յիսուս մանկիկն ձեզ պարգևէ երկար կեանք։

Սուրբ Տիրամայր Մարիամն ձեզ պաշտպան,
օրհնեալ լինիք դուք նրա հետ յաւիտեան.
լոյս արևը այսօր ծագեց Ղ՝ արարաղ,
մի՛ լար Ընի՛, աւետէ քեզ Ղ՝ արարաղն։

Հաստ աւարտեցաւ, զեռ մինչև շարականի երգելը հանդիսականաց լսելիքը ձայնի էր արձագանգն և ներգործութիւնը զեռ շնչուում էին ամենքի սիանջին և հանդիսականաց թուում էր, թէ նոյն յորդորական խօսքերը զեռ շարունակուում էին։

Ընդի յուսադրութիւնը երգելուց յետոյ Սորին Բարձր Սրբազնութիւնը, որ սաստիկ ոգևորել էր այս սրտաբուխ տեսարանովը, որ իր օրինակովը ցոյց էր տուել այս գործոյ կարևորութիւնը, ազգու և կարբանով նմանեցրեց Ղարաբաղու ՝այ տիկնանցը հինգերորդ դարու քաղցրահնչեան Դղեշէի նկարագրած տիկնանցը, համեմատելով նրանց մեծագործութեան և այս գործից սպասելու պտուղը իրար հետ, ցոյց տուեց, թէ հինգերորդ դարու ՝այոց աշխարհքի փափկասուն տիկնայքը, որոնց կրած նեղութեանց և տառապանաց պատկերը նոյն Դղեշէն սրտաբաղխ խօսքերով մեր առաջն է դնում, մխիթարուում էին կատարելապէս մարդարէից ընթերցուածքներով։ "Սաղմոսք էին մշանջենաւորք՝ մրմունջք բերանս նոցա և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն,, , ցոյց տուեց անխոնջ Առաջնորդը, թէ ուսումն և գիտութիւնը որով լցուած էին նոքա , էր

ռաջին և գլխաւոր պատճառք նրանց վեհագործութեան և անձնազոհութեան, ցոյց տուեց, թէ այժմ ևս Շուշուայ ազգասէր տիկնայքը նմանեցան այն ինքնանուէր նահատակ կանանցն՝ իրենց զաւակաց կրթութեան համար ոչինչ չինայելովը. իսկ ապագայումը քրիստոնէութեան և ազգութեան մէջ դաստիարակուած այս դեռափթիթ աղջիկունքը պէտք է պատկեն իրենց պատճառներին լանք և հասնեն իրենց կոչմանը, ներշնչելով որ սերնդի մէջ սէր առ Աստ և առ իւր ազգն։ Ապա Նորին Բարձր Սրբազնութիւնն իր արտասուալից աչքերը դարձրեց դէպի մանկացեալ Փրկիչն Յիսուս և Նրա Մայր պաշտպանն ուսումնարանիս ու Ջերմեռանդ աղօթիւք, կատարեալ հաւատով խնդրեց ամէն մանկանց համար իրեն դիրկը միշտ բաց արած Յիսուսին, իրեն տուրը Ծնողի միջնորդութեամբն արդիւնաւորել այս ուսումնարանը, հաստատ պահպանել յաւիտեանս յաւիտենից և այսուհետև էլ ինչպէս Ղարաբաղու, նոյնպէս և Հայաստանի ամենայն կողմերը բազմացնել էսպիսի տիկիններ և պարոններ, որոնք կարողանան մեր Մայր Հայաստանի բազմազարեան արտասուքը սրբել։

Նորին Բարձր Սրբազնութեան այս ի սրտ բղխած մաղթանաց հետ և բոլորի հոգիներն էլ բարձրացան զէպի աղբիւրն ամենայն գիտութեան և բարութեան, և կրկին հանդիսականք բաղմեցան իրենց տեղերը. իսկ աղջատէր տիկիններն առաջներն առած իրենց սանուհիներին՝ այս անմեղ աղջիկներին՝ ապագայի մեծ յոյսերին, զուարթ սրտով մերձեցան Սրբազանի աջը համբուրելու։

Նորին Բարձր Սրբազնութիւնն ամէնքին օրհնելուց յետոյ մի պահպանիչով էլ օրհնեց այս սկսուածքն, և կրկին ու կրկին ուրախական կեցցէներով հնչուեցաւ «Ցնծացէք Էրէնի Աստուծոյ» երգն ու այս պատկառելի ժողովքն արձակուեցաւ։

Միւս օրն ապրիլի 8 ին արդէն դասատուութիւնը սկսուեցաւ։

Մի քանի օր յետոյ Նորին Բարձր Սրբազնութիւնը երկու նամակաւ յայտնեց իր շնորհակալութիւնը Տիկին Ախումեանցին որպէս իւր տունը ձրիապէս տալոյ համար, նոյնպէս և նորա տեսչուհի նշանակուելու համար, որոց օրինակն այս տեղ դնելն աւելորդ չենք համարում։

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ՏԻՊԻՆ,

Ստացայ ձեր նամակը, որի մէջ Հոգաբարձուհի Տիկնանց կողմից յայտնում էք ձեր շնորհակալութիւնը ձեր սկսած գործին յաջողութիւն տալուս համար։ Ստուգանից յաջողութիւն խնդրելով ձեր սկսուածին՝ յայտնում եմ սրտիս զգացողութիւնը, թէ այդ բանովն անմահացրիք ձեր անունն ազգային յիշատակարանի մէջ, որպէս միւս Հոգաբարձուհի տիկնայք՝ նոյնպէս և ձեր բարեպաշտութիւնը, որ այս գործոյս աւելի շուտ ընթացք տալու համար առաջարկեցիք ձեր տանից հինգ սենեակ Օրիորդաց Ուսումնարանի համար, որով և շուտով սկսաւ այդ ազգային լուսաւորութեան գործի բացումը։

Խնդրեմ պարգևատու Փրկչից, որ այդ ձեր ջերմեռանդութեան փոխարէն վարձատրեսցէ ձեզ ձեր ողորմութեամբն և ձեր արածն 'ի փառս ձեր ընկալցի։

Հոգանաւոր Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի՝
Ստեփաննոս Եպիսկոպոս։

Համար 86.
13-ն Ապրիլի 1864 ամի
'ի Շուշի։

ԲԵՐԵՊԱՏՈՒՄ ՏԻԿԻՆ

Գերապատիւ Տեսուչն Պարարաղու գլուխ Դպրոցի Պարոն Պետրոսն Հանշեանց՝ ի 10-ն այս Ապրիլի յայտարարութեամբ յայտնեց ինձ, թէ նոյն օրն իրեն առաջարկութեամբը ժողովել են Հոգաբարձուհի Տիկնայք Օրիորդաց Դպրոցումն և միաձայն ընտրել են ձեզ Տեսչուհի Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի. իսկ դուք հրաւիրել էք ձեր կողմից վերակացուհի Ուսումնարանին կոյս Աղիսաբէթ Սիմոնեանցին։

Մեծ ուրախութիւն պատճառեց ինձ այդ ընտրութիւնը, որով Ուսումնարանի կառավարութիւնը սկսաւ իւր կարգն ստանալ։ Օրհնելով ձեզ ձեր պաշտօնի մէջ՝ խընդրեմ շնորհատու Փրկչից, որ տայցէ ձեզ զօրութիւն կատարել այդ ազգասիրական պարտաւորութիւնը նոյն հոգւով և ուրախութեամբ, որպէս սկսել էք, շնորհեսցէ համեստաբարոյ կոյս Աղիսաբեթ Սիմէոնեանցին արժանապէս՝ ի զլուխ տանել իւր յանձնառած պարտաւորութիւնը, իսկ Ուսումն-

նին տացէ մշտնջենաւորութիւն և յաւաջա-
դիմութիւն ։

Հոգեւոր Պարարաղու Սուրբ
Մարիամու Օրիորդաց Ուսումնա-
բանի Սանիսանոս Արքեպիսկոպոս ։

Համար 87 ։
Ի 15-ն Ապրիլի 1864 ամի
Ի Հուշի ։

Ընտանիք Ռաբբերաբաց, Հոգաբաշխաց և Ուրբեցաց։

Ռաբի Սրբազան Սահմանոս Արքեպիսկոպոսն ունի երկու որդեգիրք՝ Ենոյշ Ռափայելեան և Մինա Ալեքսանեանց։

Տեսչուհի Մարիամ Հախումեանցն ունի երկու որդեգիրք՝ Սառայ Սամուէլեանց և Սօնա Ենաոնեանց։

Մարգարիտ Մելիք Հովհաննէսեանց՝ մի որդեգիր՝ Սատալիա Միջանեանց։

Խաթուն Գանջեցեանց՝ մի որդեգիր՝ Սառա Պարապետեան։

Թագուհի Գոլուխանեանց՝ մի որդեգիր՝ Սալաթին Յովհաննիսեանց։

Սոփիա Լոսիկեանց՝ մի որդեգիր՝ Գոհար Սուարեանց։

Խանում Ղամալեանց՝ մի որդեգիր՝ Ջաւահիր Պետրոսեան։

Ջաւի Հազարեանց՝ մի որդեգիր՝ Հեղինէ Վարազեանց։

Գալո Մելիք Հովհաննէսեանց՝ մի որդեգիր։

Ջաւահիր Սափարեանց՝ մի որդեգիր։

Սոփիա Միրզոյեանց։

Գաշխուն Խաչատրեանց ։
Աբիսախմէ Օհանեանց ։
Աղախանում Խանդամիրեանց ։
Խանում Մելիք Զարգեոզեանց ։
Թայիանէ Բաղինեանց ։
Մինա Զուրաբեանց ։
Հահզանա Սարուխանբէկեանց ։
Զիլիսաբեթ Խասան-Զալալեանց ։
Խանիկա Ղազարեանց ։
Հագում Հիրեանց ։
Մինա Խսումեանց ։
Աբիսախմէ Զրամեանց ։
Զաւահիր Սարախանեանց ։
Սոփիա Լազարեանց ։
Բզգի Լազարեանց ։
Զաւահիր Գասպարեանց ։
Մանուշակ Խանդամիրեանց ։
Զառզալամ Խաչատրեանց ։
Լարդիսթուն Հիրեանց ։
Սոփիա Հիրեանց ։
Օլիմի Քալանթարեանց ։
Զոզակաթ Ղամալեանց ։
Հագում Ռէզլարեանց ։
Զիլիսաբեթ Ղամալեանց ։
Հագում Գօրուխանեանց ։
Ընթառամ Հահմուրադեանց ։

Մարիամ Ընթարէզեանց ։
Ընուշկա Ղուլինանց ։
Ռուբար Ղուլինանց ։
Սազու Հասան-Ղալալեանց ։
Եկատարինէ Մանդինեանց ։
Իշխանուհի Եկատարինէ Ռէհրուզեանց ։
Սաալիա Մատաթեանց ։

Այս յոգուածն արդէն շարուում էր, որ Պարոն Ռալայ-բէկ Մելիք Պարագեօղեանցը զգալով աղջկանց կրթութեան մեծ նշանակութիւնը և Պարարաղու ապագայն այդ Ուսումնարանի մէջ տեսնելով, հետևեալ նամակն ուղարկեց հարիւր մանէթ՝ յայտնելով իր միտքը Տեսչուհուոյն, ինչպէս նամակից երևում է. Տեսչուհին ևս իր կողմից ընդունեց նորա գեղեցիկ գաղափարն և իր շնորհակալութիւնը յայտնեց նամակաւ։

ԳՈՐԾԱԳԱՏԻ ՏԻԿԻՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱԽՈՒՄԵԱՆՑ։

Այս ազգային լուսաւորութեան մեծ գործքն՝ աղջկանց կրթութիւնը, որի մէջն է ազգի ապագայն և որ սկսաւ ձեր մայրական բազմաշխատ հոգացողութեամբը, պէտք է կարեկցութիւն յարուցանէ ամէն Հայի մէջ, որոց համար թանդ է մեր սիրելի Հայաստանի վիճակը։

Ամենով ձեր ներկայ մեծ գործքին յայտնել իմ համակրութիւնն, ես ուղարկում եմ ձեզ յօգուտ Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի հարիւր մանէթ, որ իմ գատողութեամբը լաւ եմ համարում, եթէ այդ գումարը շինէիք մշտընջենաւոր մայր գումարի հիմն Օրիորդաց Ուսումնարանի համար, որով այսպիսի լուսաւորութեան մեծ գործքի ներկայն կուենենայ ապահովեալ ապագայ։

Մնամ խոնարհ ծառայ ձեր
Ռ. Մելիք Ղարագիոզեանց։

15 Ապրիլի 1864 ամի
Ի Շուշի։

ԹՂԹՄԱԾ ՏԵՂ

ՌԱԼԱ-ԲԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ապրիլի 15-ին ստացայ Ձեր նամակը հանդերձ հարիւր մանէթով Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի համար։

Մենք երջանիկ ենք համարում մեզ, որ մեր տարած փոքրիկ ու աննշան հոգացողութիւնքը շնորհիւ Աստուծոյ ստանում են մեծ նշանակութիւն մեր ազգի Օրիորդաց լուսաւորութեան համար. եթէ ներկայ ժամանակումն մեր հոգաբարձուհեացս հոգացողութեամբն Օրիորդաց կրթութիւնը ստանում է բարի ընթացք, պարտք եմ համարում ասել, որ Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի ապագայի բարօրութիւնը Ձեզ կըպատկանի Ձեր առաջարկած գաղափարին, որով տալիս էք գուք սկիզբը մշտնջենաւոր մայր գումար կազմելու. արդարև այդպիսի մշտնջենաւոր մայր գումարը կարող է ապահովացնել և մշտնջե-

Նաւորել Սուրբ Նարիամու Օրիորդաց Ու-
սուցնարանի ապագայն ։

Յայտնելով մեր լիովին շնորհակալութիւնը՝
Անամ Զեզ բարեացակամ
Նարիամ Հախումեանց ։

Ի 16-ն Ապրելի 1864 ամի
Շուշայ ։

Այս տեղ մեզ էլ ոչինչ չէ մնում ասելու, բայց միայն թէ Ղարաբաղը՝ որ Հայաստանի նահանգներից մէկն է և երևելի է իր վեհ գիւղացոյց քաջագործութիւններով, այժմ զգացել է, թէ առանց ուսման քաջութիւնն ոչինչ է, և իւր այս համոզմանց վրայ հաստատ մնալու ապացոյցն էլ իր աղայոց և աղջկանց դպրոցներն են, որոնց մէկի պտուղը փոքր միջոցից կերևի, իսկ միւսինն ապագայն ցոյց կըտայ։

Տէր Աստուած, որ Ղարաբաղցւոց բարի օրինակը տարածուէր Հայաստանի ամէն գաւառներումն և զարթնացնէր իրենց խոր քնից։ Ա՜խ, ... "Ընկա՛լ փաղչէ՝ ՝ ՝